ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 34

«29» 08 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի՝ «Ա. Հարությունյանին արձակուրդ տրամադրելու մասին» 2018 թվականի հունիսի 3-ի թիվ 7/121-Ա հրամանը և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 24 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածով սահմանված կարգի 17-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի նախագահի պարտականությունների կատարումը սույն թվականի օգոստոսի 21-ին դնել Երևան քաղաքի դատախազ Գ. Բաղդասարյանի վրա:

Ա. ԴԱՎԹՅԱՆ